ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ԹԱՄԱՐԱ ՅԱՅԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Թամարա Յայլոյանի (արտոնագիր 292) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի 19.01.2015թ. տրված տեղեկանքի համաձայն www.news.am և www.novostink.ru լրատվական կայքերում հրապարակվել են ստորև նշված տեղեկությունները.

* * *

17.01.2015թ. ժամը 10:18-ին www.news.am լրատվական կայքում հրապարակվել է ***«Պերմյակովը դանդաղ էր խոսում, բոլոր հարցերին պատասխանում էր՝ չեմ կարող ասել»*** վերտառությամբ հրապարակումը (**այսուհետ**՝ News.am-**ի Հրապարակում**)՝ հետևյալ բովանդակությամբ. *«Փաստաբան Թամարա Յայլոյանը եղել է Գյումրիում 6 անձի սպանության մեջ մեղադրվող Վալերի Պերմյակովի փաստաբանը, երբ նա կասկածյալ էր եւ մասնակցել է մի շարք քննչական գործողությունների: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում ասաց փաստաբանը:*

Նա պատմեց, որ իրեն որպես փաստաբան ներգրավվելու հարցով դիմել է Շիրակի քննչական պետի տեղակալ Սահակ Մկրտչյանը՝ խնդրելով ներկայանալ ռուսական զորամաս: Թամարա Յայլոյանը մասնակցել է նրա հարցաքննությանը, անձնական խուզարկությանը, ձեռքերից, ականջներից եւ քթանցքից կրակոցի հետքեր վերցնելուն: Ըստ որում՝ հետքեր վերցնող փորձագետը հայ էր, հետեւաբար՝ փորձաքննությունը կացնկացվի Երեւանում:

Հարցին, թե ինչ էր նշում Պերմյակովը՝ որպես սպանության պատճառ, փաստաբանը պատասխանեց. «Հիմնականում բոլոր հարցերին պատասխանում էր՝ չեմ կարող ասել: Երբ ասում էին՝ ինչու սպանեցիր, իսկ երեխային ինչու սպանեցիր, ասում էր՝ չեմ կարող ասել: Պերմյակովը պատմում էր, թե պատահական է մտել այդ տուն, պարզապես երբ հասել է այդտեղ, ծարավ է զգացել, որոշել է ներս մտնել: Ինքը շատ հոգնած էր, անընդհատ քնում,

արթնանում էր, դանդաղ, դժվարությամբ էր խոսում: Պատմում էր, որ պատուհանից է մտել, երեք սենյակ էր, առաջինում մի հոգի էր, արթնացավ, աղմկեց, ասում է՝ ես հայերեն չեմ հասկանում, երբ ձեռքը տարավ հեռախոսին, կրակեց, հետո երկրորդ սենյակից ձայն լսեց, գնաց, 2 հոգի էին, երկուսին էլ կրակեց, երրորդ սենյակում 4 հոգի էին, երեքին սպանեց, փոքիկին էլ էր ուզում սպանել, ավտոմատը չաշխատեց, դրա համար դրա վրա գտնվող սվինով հարվածեց: Դրանից հետո նա հագուստը փոխել է հավանաբար հետքը թաքցնելու համար, ջուր խմել եւ հեռացել: Պերմյակովը նաեւ ասում էր, թե ինքը Թուրքիա գնալու նպատակ չի ունեցել, հենց այնպես գնում էր, փախչում էր, հայտնվեց սահմանի մոտ, այստեղից էլ ես եզրակացնում եմ, որ ինքը որեւէ շեղում չունի: Ինքը ասում է նաեւ, որ մենակ է եղել»,-ասաց փաստաբանը: Իսկ թե ըստ փաստաբանի՝ որն է սպանության իրական մոտիվացիան, փաստաբանը նշեց, որ երեւի կան որոշ մարդիկ, որոնք առանց որեւէ տրամաբանության ինչ-որ բան են անում, երեւի չափազանց շատ ենք տրամաբանություն փնտրում, իրենց համար թերեւս ներմալ է, որ տրամաբանություն չկա:

Դրանից հետո ռուսական կողմի քննիչը դիմել է Թամարա Յայլոյանին, որպեսզի նա մասնակցի կալանքի սանկցիային, սակայն նա հրաժարվել է, քանի որ էմոցիոնալ առումով չէր կարող ներկա գտնվել, զգացմունքները թույլ չէին տալիս, հարցաքննության ժամանակ էլ մի քանի անգամ չի դիմացել եւ դուրս է եկել: Նա կարծում է, որ հայկական կողմից անպայման պետք է փաստաբան կամ հանրային պաշտպան մասնակցի եւ լավ կլինի, որ տղամարդ լինի:

Որպես կասկածյալ, երբ փաստաբանը մասնակցել էր քննչական գործողություններին, նրա խոսքով. ռուսական կողմի քննիչը ասել էր, որ ամենայն հավանականությամբ Պերմայոկվին կհանձնեն հայկական կողմին, պետք է դատախազները պայմանավորվեն: Իսկ թե ինչպես էր Պերմյակովը հայտնվել ռուսական իրավազորության ներքո, Թամարա Յայլոյանը երկու հարց է բարձրացնում՝ նախ ռազմաբազայի տարածքը ՌԴ տարածք է, թե ոչ եւ սահմանը պահող օտարերկրյա զինծառայողները մարդ բռնելիս իրավունք ունեի՞ն նրան տեղափոխել ռազմաբազա, թե պետք է ահազանգեին հայ իրավապահներին:

Թամարա Յայլյոնանն ասաց, որ միայն այսքան օր անց որոշել է խոսել, քանի որ անհեթեթ մեկնաբանություններ էին արվում իր հասցեին: Նա վստահեցնում է, որ ինքը որեւէ գումար չի վերցրել եւ չի վերցնելու որպես կասկածյալ միջոցառումներին մասնակցելու համար:

Ավելի վաղ NEWS.am-ը հայտնել էր, որ հունվարի 12-ին Գյումրիի Մյասնիկյան փողոցի տներից մեկում հրազենային վնասվածքներից սպանված են գտել Ավետիսյանների ընտանիքի 6 անդամներին, այդ թվում՝ մեկուկես տարեկան դուստրը: Վեց ամսական Սերյոժա Ավետիսյանը վնասվածքներ էր ստացել եւ տեղափոխվել է հիվանդանոց: Նրա վիճակը կայուն ծանր է:

Կասկածյալը՝ ռուս զինվորական Վալերի Պավելի Պերմյակովը ձերբակալվել է նույն օրը կեսգիշերին մոտ, ըստ պաշտոնական տվյալների՝ հայ-թուրքական սահմանի մոտ: Ներկայումս նա գտնվում է ռուսական ռազմակայանում: Նրան կալանավորել են եւ մեղադրանք են առաջադրել Ռուսաստանի Դաշնության Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ (երկուսից ավելի մարդկանց սպանություն) եւ 338-րդ հոդվածի 2-րդ մասի (դասալքություն՝ ծառայողական զենքով): Սպանության փաստով քրգործ է հարուցվել նաեւ ՀՀ Քննչական

կոմիտեում:

ՀՀ գլխավոր դատախազության մեկնաբանմամբ, նա գտնվում է ՌԴ իրավազորության ներքո եւ դատվելու է ռուսական օրենսդրությամբ: Այս որոշումը հանրային բողոքի լայն ալիք է բարձրացրել, վերջին օրերին բողոքի ակցիաներ եւ մոմավառություններ են եղել Երեւանում, Գյումրիում, այլ քաղաքներում:»:

* * *

17.01.2015թ. ժամը 17:59-ին www.novostink.ru լրատվական կայքում հրապարակվել է «***Ռուս քննիչը փոխանցեց, որ Պերմյակովին պաշտպանելու համար Ռուսաստանից փաստաբան է եկել». փաստաբան***» վերտառությամբ հրապարակումը (**այսուհետ**՝ Novostink.ru-**ի Հրապարակում**)՝ հետևյալ բովանդակությամբ. *«Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան Թամարա Յայլոյանը, ով ընդամենը մի քանի ժամով եղել է Գյումրիում Ավետիսյանների ընդանիքի վեց անդամի սպանության և վեց ամսական երեխայի նկատմամբ սպանության փորձ կատարելու մեջ մեղադրվող Վալերի Պերմյակովի պաշտպանը՝ դեռևս կասկածյալ լինելու ժամանակ, ասաց, որ նա հարցաքննության, անձնական խուզարկության ընթացքում իրեն հանգիստ էր պահում, նորմալ, հոգեկան հիվանդի տպավորություն չի թողել: Նա ասաց, որ իրեն հունվարի 13-ին Շիրակի մարզի քննչական վարչության պետի տեղակալ Մկրտչյանն է դիմել՝ որպես փաստաբան ներգրավվել գործին: Նա ասաց, որ հունվարի 13-ի ժամը 5:00-ից մինչև 11:00-ն է ներգրավված եղել գործում:*

Թամարա Յայլոյանի խոսքով, Պերմյակովը հարցերին հիմնականում պատասխանում էր՝ չգիտե, չի կարող ասել ինչու է այդպես վարվել:

Վ. Պերմյակովը, ըստ նրա, ասել է, որ ինքը մենակ է գործել, Ավետիսյանների ընտանիքին չի ճանաչել, որևէ մեկի հետ կոնֆլիկտ չի ունեցել. «Նա պատմել է, որ լքել է զորամասը, ցանկացել է քաղաքը շրջելուց հետո վերադառնալ զորամաս: Զգացել է, որ ծարավ է: Տներից մեկի դարպասը բաց է եղել: Նա հանել է պատուհանի ապակին ու մուտք գործել: Ընտանիքի ադամներից մեկն արթանացել է, աղմկել, ձեռքը պարզել է դեպի բջջային հեռախոսը, ինքն էլ սկսել է կրակել: Փոքրիկ երեխային էլ է ուզել սպանել, ավտոմատը չի աշխատել, հարվածել է սվինով: Այնուհետև փոխել է հագուստը, ջուր խմել ու հեռացել»: Փաստաբանն ասաց, որ, հունվարի 13-ի երեկոյան ռուսական կողմին հայտնել է, որ այլևս չի ցանկանում մասնակցել տվյալ գործին:

«Գործով ռուս քննիչը փոխանցել է, որ հունվարի 13-ի գիշերը Ռուսաստանից փաստաբան է եկել, թեև Հայաստանի Փաստաբանների պալատը պաշտպան է տրամադրել: Ռուս փաստաբանը մասնակցել է Պերմյակովի՝ որպես մեղադրյալ հարցաքննությանը և կալանքի սանկցիային»,- ասաց նա:

Հիշեցնենք, որ Վ. Պերմյակովին մեղադրանք է առաջադրվել ՌԴ Քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետի և 338-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ սպանություն և դասալքություն: ՀՀ քննչական կոմիտեն նույնպես գործ է հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով (երկու կամ ավելի անձանց սպանություն):»:

Գտնում եմ, որ զանգվածային լրատվամիջոցի հրապարակման հիման վրա փաստաբան Թամարա Յայլոյանի նկատմամբ պետք է հարուցել

կարգապահական վարույթ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ***փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝*** *պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները),* ***ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:***

Փաստաբան Թամարա Յայլոյանի՝ հրապարակումներից առերևույթ հետևում է՝

- ***քրեական գործով մեղադրյալին իրավական օգնություն է ցույց տվել վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ (հրավերով).***
- ***հրաժարվել է իրավական օգնություն ցույց տալուց.***
- ***հրապարակել է նախնական քննության տվյալները:***

* * *

ա) Փաստաբան Թամարա Յայլոյանի կողմից քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ (հրավերով) մեղադրյալին իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև Կանոնագիրք**) 3.1.9 ենթակետի համաձայն՝ ***Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու հանձնարարություն: Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի խորհուրդը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի պատվերով: Պալատի խորհուրդը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից: Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

News.am-**ի Հրապարակման** մեջ առկա է տեղեկատվություն համաձայն որի՝ փաստաբան Թամարա Յայլոյանը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է,

որ ***<u>իրեն որպես փաստաբան ներգրավվելու հարցով դիմել է Շիրակի քննչական վարչության պետի տեղակալ Սահակ Մկրտչյանը</u>***՝ խնդրելով ներկայանալ ռուսական զորամաս: Թամարա Յայլոյանը մասնակցել է նրա հարցաքննությանը, անձնական խուզարկությանը, ձեռքերից, ականջներից եւ քթանցքից կրակոցի հետքեր վերցնելուն:

Novostink.ru-**ի Հրապարակման** մեջ առկա տեղեկատվության համաձայն փաստաբան Թամարա Յայլոյանը նշել է, որ ***<u>իրեն հունվարի 13-ին Շիրակի մարզի քննչական վարչության պետի տեղակալ Մկրտչյանն է դիմել՝ որպես փաստաբան ներգրավվել գործին</u>***: Նա *[փաստաբան Թամարա Յայլոյանը]* ասել է, որ հունվարի 13-ի ժամը 5:00-ից մինչև 11:00-ն է ներգրավված եղել գործում:

Ներկայացված երկու հրապարակումներում առկա տեղեկատվությունից առերևույթ բխում է, որ մեղադրյալ Վալերի Պերմյակովի քրեական գործով փաստաբան Թամարա Յայլոյանը քրեական գործի վարույթին ներգարվվել և որոշակի քննչական գործողություններին (ըստ News.am-ի Հրապարակման՝ հարցաքննությանը, անձնական խուզարկությանը, ձեռքերից, ականջներից և քթանցքից կրակոցի հետքեր վերցնելուն) մասնակցել է ***<u>Շիրակի մարզի քննչական վարչության պետի տեղակալ Սահակ Մկրտչյանի հանձնարարությամբ (հրավերով)</u>***:

<u>Կարգապահական վարույթի ընթացքում վերը նշված փաստերի հաստատման դեպքում փաստաբան Թամարա Յայլոյանի վարքագիծն առերևույթ կարող է հակասել Կանոնագրքի 3.1.9 ենթակետով նախատեսված կանոնին:</u>

Ստուգման կարիք ունի նաև այն հանգամանքը, թե՝ Թամարա Յայլոյանը Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության հիմքով է մասնակցել Վալերի Պերմյակովի առնչությամբ ընթացող վարույթին, թե՞՝ ՌԴ օրենսդրության հիմքով:

* * *

բ) **<u>Փաստաբան Թամարա Յայլոյանի կողմից իրավական օգնություն ցույց տալուց հրաժարվելու վերաբերյալ.</u>**

Կանոնագրքի 3.8.3 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրում, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով***

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարության հետ, որոնք օրենքով արգելված են,

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Նշված կանոնի տառացի մեկնաբանությունից բխում է, որ փաստաբանը (պաշտպանը) ոչ բոլոր դեպքերում կարող է հրաժարվել իր վստահորդին (պաշտպանյալին) իրավական օգնություն ցույց տալուց:

Փաստաբանի՝ իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու իրավունքն իր էությամբ բացարձակ իրավունք չէ (վարքագծի կանոնով սահմանափակված իրավունք է), քանի որ դրա իրացման համար անհրաժեշտ է Կանոնագրքի 3.8.3 ենթակետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության հանգամանքը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

News.am-**ի Հրապարակման** մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ ***ռուսական կողմի քննիչը դիմել է Թամարա Յայլոյանին, որպեսզի նա մասնակցի կալանքի սանկցիային, սակայն նա հրաժարվել է, քանի որ էմոցիոնալ առումով չէր կարող ներկա գտնվել, զգացմունքները թույլ չէին տալիս, հարցաքննության ժամանակ էլ մի քանի անգամ չի դիմացել եւ դուրս է եկել:***

Novostink.ru-**ի Հրապարակման** համաձայն՝ փաստաբանն ասել է, որ, հունվարի 13-ի երեկոյան ռուսական կողմին հայտնել է, որ այլևս չի ցանկանում մասնակցել տվյալ գործին:

Հրապարակումներում առկա վերը նշված տեղեկատվության հաստատման դեպքում կստացվի, որ փաստաբան Թամարա Յայլոյանը սկզբում **ստանձնել է** (առերևույթ վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ (հրավերով)) մեղադրյալ Վալերի Պերմյակովի պաշտպանությունը և մասնակցել է որոշ քննչական գործողությունների իրականացմանը, իսկ հետագայում **հրաժարվել է** մասնակցությունից կալանքի սանկցիային, այսինքն՝ իրավական օգնություն ցույց տալուց: Նման պայմաններում ***կարգապահական վարույթի ընթացքում վերը նշված փաստերի հաստատման դեպքում փաստաբան Թամարա Յայլոյանի վարքագիծն առերևույթ կարող է հակասել Կանոնագրքի 3.8.3 ենթակետով նախատեսված կանոնին:***

Ստուգման կարիք ունի նաև այն հանգամանքը, թե՝ Թամարա Յայլոյանը Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության հիմքով է մասնակցել Վալերի Պերմյակովի առնչությամբ ընթացող վարույթին, թե՞՝ ՌԴ օրենսդրության հիմքով:

* * *

գ) Փաստաբան Թամարա Յայլոյանի կողմից նախնական քննության տվյալները հրապարակելու վերաբերյալ.

Հրապարակումներում առկա տեղեկատվությունից առերևույթ բխում է, որ փաստաբան Թամարա Յայլոյանը՝ մասնակցելով Վալերի Պերմյակովի նկատմամբ հարուցված քրեական գործին, զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել է այնպիսի տեղեկատվություն, մասնավորապես՝ ներկայացրել է մեղադրյալ Վալերի Պերմյակովի կողմից տրված ցուցմունքի մանրամասները, ինչը

քրեադատավարական իմաստով առերևույթ կարող է որակվել որպես նախնական քննության տվյալների հրապարակման անթույլատրելիության սկզբունքի խախտում (նախաքննական գաղտնիքի հրապարակում):

Նշված հանգամանքը կարող էր փաստաբան Թամարա Յայլոյանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմք հանդիսանալ, սակայն Պալատը՝ սույն որոշումը կայացնելիս, հաշվի է առնում այն, որ փաստաբան Թամարա Յայլոյանի կողմից հայտնած և 17.01.2015թ. ժամը 10:18-ին և 17:59-ին հրապարակված տեղեկությունները, ***ավելի վաղ՝ 13.01.2015թ. ժամը 09:40-ին արդեն իսկ հրապարակված են եղել*** Հայաստանի Հանրապետության ոստիկանապետի առաջին տեղակալ Հունան Պողոսյանի հետ նույն www.news.am լրատվական կայքի թղթակցի հետ ներկայացված զրույցի արդյունքում՝ *«Գյումրիում ընտանիքի սպանության մեջ կասկածվողը սկսել է ցուցմունք տալ. մանրամասներ»* հրապարակման[1] մեջ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն կետում նշված հիմքով փաստաբան Թամարա Յայլոյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվում՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի (փաստաբանի այն արարքը, որում առերևույթ առկա կլինի Օրենքի կամ Կանոնագրքի խախտում) բացակայության պատճառով:

* * *

<u>Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է՝</u> *փաստաբան Թամարա Յայլոյանի կողմից՝*

- *Վալերի Պերմյակովի քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի հանձնարարությամբ (հրավերով) իրավական օգնություն ցույց տալու և*
- *Վալերի Պերմյակովին Կանոնագրքի պահանջների խախտմամբ իրավական օգնություն ցույց տալուց հրաժարվելու վարքագիծը ստուգելու նպատակով:*

Հարկ է արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ մասի, 39.3 հոդվածի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Փաստաբան Թամարա Յայլոյանի (արտոնագիր թիվ*** *292)* ***նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի*** *3.1.9* ***և*** *3.8.3* ***ենթակետերի պահանջի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-***

[1] http://news.am/arm/news/247475.html

15001):

*2. **Համապատասխան դիմում ներկայացնելու դեպքում՝ որպես սույն կարգապահական վարույթի կողմ (դիմող) ճանաչել նաև Վալերի Պերմյակովին:***

*3. **Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝***

*– **կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.***

*– **սույն որոշման օրինակն ուղարկել փաստաբան Թամարա Յայլոյանին՝ պարզաբանելով նրան՝ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

19 հունվարի 2015**թ.**
թիվ 12-**Ա/ԿԳ**-15001
ք.Երևան